ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 1131-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ ենթակետի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 34-րդ հոդվածով, ՀՀ հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի, հիմք ընդունելով Ակունք համայնքապետարանի աշխատակազմի աշխատակից՝ հողաշինարար Ռաֆֆի Գասպարյանի 2025 թվականի դեկտեմբերի 29-ին կազմած արձանագրությունը, այն մասին, որ թիվ 07-049-0277-0238 կադաստրային ծածկագրով հողամասը օգտագործվում է ոչ գործառնական նշանակությամբ և ծանրաբեռնված է ինքնակամ շենք-շինություններով:

1. 2025 թվականի դեկտեմբերի 29-ի արձանագրության հիմքով հարուցել վարչական վարույթ:
2. Վարչական վարույթի քննարկման օրը նշանակել 2026 թվականի հունվարի 12-ին, ժամը 13:30-ին:
3. Սույն որոշման մասին օրենքով սահմանված կարգով և ժամկետում ծանուցել թիվ 07-049-0277-0238 ծածկագրով հողամասի սեփականատիրոջը՝ Գեղամ Թադևոսի Մաթևոսյանին/Կոտայքի մարզ Ակունք Նոր գյուղ 2-րդ փողոց 32 տուն/:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

2025 թ. դեկտեմբերի 29
գ. Ակունք